

Եղած որոշումներն հաւանութիւն կուտան Լորտ Տէրութիւն քաղաքականութեան: Փարթի 27 մայիս:

Իտալիայ թողաւոր խնտ բարեկաւ մական նամակ մը զրկեց Մաք-Մազոն մալրաձախտին:

Լոնտոն 28 մայիս:
Անգլիոյ ժողովները մայիս 19/21 ին իրենց նիստերը վերադարձան պիտի սկսին:
Ամերիկայի Միացեալ Նահանգաց Նախորդ նախագահ Պ. Կրանթ Լիվերմուէր եկաւ:

Ռուսիա՝ Լեհ կաթողիկոս չառն ուխտագնացութիւնն արգելեց:

Աթէնք 28 մայիս:
Նախարարաց գլուխ Պ. Տէլի Եօրիկ հրաժարական տուաւ երեսօխոսանաց ժողովին առջև՝ յայտնելով թէ Արեւելից ծանր վիճակը նկատելով՝ Յունաստան աւելի զօրաւոր կառավարութեան մը պէտք ունի:

Օտմ. Գոնս.	8 1/8
Փոխ.	1863 8 3/4
"	1869 8 1/2
"	1871 28 3/4
"	1872 44 5/8
"	1873 8 1/8
" Կողմոր.	36
Անգլ. Գոնս.	95 5/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՌԱՅՈՒԹԻՒՆ
ՈՉ—ՄԱՀՄԵՏԱԿԱՆԱՑ

Մայրաքաղաքի մար Տիւ Պօսֆօր լրագրին մէջ հետեւեալ յօդուածը կը կարդանք.

«Հայ և Յոյն լրագրիք կը շարունակեն քննել տէրութեան ոչ-մահ-մետական ժողովրդոց զինուորական ծառայութեան ենթարկուելուն խնդիրը: Երբ մամուլը չհակառակիր քրիստոնէից իրենց հայրենիքը պաշտպանել սովորելու սկզբան. բայց մէկ կողմէ ներկայ պատերազմին տրուած կրօնական կերպարանքն, և միւս կողմէ այն կարծիքը թէ կառավարութիւնն որոշած է այնպիսի անձինք հաւաքել, որք երբեք զինուոր եղած չեն և զանոնք պատերազմի դաշտը զրկել՝ առանց ժամանակ տալու որ զինուորական կենաց վարժուին ու կրթուին, Յոյն լրագրաց մեծ մասին երկիւղ կը պատճառեն: Այս կարծիքն, որ վագրը և Պասիքէթ լրագրաց յօդուածներէն ծագում առած է, ըստ մեզ անհաւատալի է: Եթէ կառավարութիւնն իւր ոչ մահմետական հպատակներէն զօրք ստեղծ որոշած է, անոր համար է որ կուզէ ասով նոր ապացոյց մը տալ թէ Արեւելից մէջ հաւատարութիւն մոցնելու հաստատ զիտաւորութիւն ունի:

«Երբոր թշնամի տէրութիւն մ'Օսմանեան երկիրը կարշաւէ բարենորոգմանը և քրիստոնէից բարեկեցութիւն մոցնելու պատրուակաւ, շատ իրաւացի է որ մեր կառավարութիւնն ալ՝ իւր ուշադրութիւնը դրաւող բազմազմի հոգեւոր մէջ իսկ՝ թշնամոյն գլխաւոր փաստերը ձեռքէն առնելու և իւրապիւր կարծիքն ինչպես Օսմանեան պետութեան դարձնելու միջոցներ խորհի: Բ. Դրան փնտռածն՝ այս յայտնի հաւատարութեան հետեւ ելիք քաղաքական մեծ օգուտն է, և ոչ թէ զէնք բռնել չը գիտցող 50000 ձախող զինուորագրերը մատուցանելիք ծառայութիւնը: Բ. Դրանք դիտէ որ այս յեղափոխութիւնն առանց ընդգիծութեան և առանց ցնցման կատարուած առեւ հասարակաց կարծիքն իրեն նպատաւոր կըլլայ, իսկ եթէ քրիստոնէից անկազմ խումբերը բռնութեամբ Ռուսիոյ պատերազմակիր թաւաններուն առջև քշել ուզէ, հասարակաց կարծիքն իրեն դէմ կը դրուէ, և չկայ բնաւ Օսմանցի նա-

խարար մը որ կարող ըլլայ այսպիսի զօրութիւն որ փաստ մը տալ Ռուսական քաղաքականութեան ձեռքը:

«Այս առաջին անգամը չէ որ Բ. Դրան յաւագոյն գիտատարութիւնն ներք թուրք լրագրաց ունաց չափազանց նախաձեռնողութեամբ կերպարանափոխ կրկնու: Պէտք է խոստովանել սակայն, որ այս պարագայում մէջ այս գիտատարութիւնները քիչ մը հապճեպով և անպատշաճ կերպիւ յայտնուեցան: Զինուորական ծառայութեան ազատութեան հարին ալ չափազանց աւելցաւ:

«Զինուորական ծառայութիւնը պարտաւորել պէտք է ըլլայ ինչպէս որ է աշխարհիս գրեթէ ամեն քաղաքակիրթ երկրներուն մէջ: Ամեն քաղաքացիք պարտին իրենց արիւնք թափել հայրենեաց համար՝ որ մի է, և ոչ թէ կրօնի համար՝ որ միւսն է:

Յար տիւ Պօսֆօրի այս խորհրդածութեան մէք ալ կատարելագոյն կը ձայնակցինք՝ մեր կողմէն ալ ուրիշ կարեւոր գիտողութիւն մ'աւելցնելով:

Յայտնի է որ զինուորագրութիւնը ինչպէս Եւրոպիոյ շատ երկրներուն նոյնպէս և թուրքիոյ մէջ վիճակարկութեամբ կըլլայ: Բայց վիճակարկութիւնը պարզապէս բազդի կամ գիպուածի արդիւնք է, որոյ մէջ արամարանութիւնը դործ չունի փոխանակ յարմարագոյնին հանգիպելու՝ ան յարմարին կը հանգիպի: Իսկ այնպիսի ժողովրդոց մէջ, ուր անյարմարներուն թիւն յարմարաւորաց թիւէն անհամեմատ աւելի է, այն ժամանակ անտեղութիւնը վնասակար ըլլալու չափ կը ծանրանայ: Արդ՝ թուրքիոյ ոչ-մահմետական ժողովուրդք դարեւ ի վեր զէնք գործածելու վարժութիւնը կրուսած ըլլալէ զատ, հայրենիք պաշտպանելու գաղափարն ալ կրուսած ըլլալով, այդ գաղափարն ու ոգին անոնց մէջ արթննալու համար երկար ժամանակի պէտք կայ: Մանաւանդ մեծ քաղաքաց և գլխաւորապէս Կ. Պօլսոյ ժողովրդոց մէջ քիչ կը գտնուին այնպիսի երիտասարդք, որք զինուորութեան համար անհրաժեշտ եղած հանգամանքն ունենան: Կ. Պօլսոյ բնակչաց միջին և բարձր դասերուն մէջ դժուարին է գտնել երիտասարդ մը որ թէ՛ մարմնով և թէ՛ սրտով փափուկ չըլլայ, որ կէս ժամ ճանաչալէ՝ առանց չնչապառ ըլլալու, որ քիչ մը պաղ առնելով չհիսնադանայ, որ հրազենի պայթիւն մը լսած ժամանակ չզարհուրի, և գիշերը մէկ սենեակէն միւսն առանց ճրագի երթալու քաջութիւնն ունենայ:

Արդ այսպիսի փափուկ դիւրազգած և տկարասիք առնելի կազմեալ զինուորութեան մ'ի՞նչ կրնայ ըստպատելի, բաց ի փոխադարձ վնասներէ:

Այս պատճառաւ կըսենք թէ վիճակաւ զինուորագրութիւնն առայժմ չկրնար յարմարիլ թուրքիոյ ոչ-մահմետական ժողովրդոց:

Ըստ մեր կարծեաց, եթէ տէրութիւնը վաղ կամ անագան իւր ոչ-մահմետական ժողովուրդները զինուորագրութեան պիտի ենթարկէ, փոխանակ վիճակարկութիւն ընելու՝ իւրաքանչիւր հասարակութեան յանձնէ՝ իւր բաժնին ինկած զօրքն իւր մէջէն հաւաքելով տէրութեան յանձնել և պահածին տեղն ալ դրամ վրձարել:

Օրինակի համար, եթէ Հայոց ազգէն տարին 3000 զօրական առնուլ հարկ է, ինչպէս որ զինուորական տրոց հաստատուած ժամանակ հաշիւ եղած էր, Հայոց Պատրիարքարանէն պահանջէ որ զինուորութեան

համար պէտք եղած հանգամանքն ունեցող 3000 մարդ տայ տէրութեան, և եթէ այս թիւն ամբողջացնելու չափ մարդ չտանէ, պահածին տեղ դրամ տայ: Պատրիարքարանն ալ՝ զինուորական տրոց հաւաքումը շարունակելով, անկէ գոյացած դրամով յարմար և յօժար մարդիկ կը գտնէ, որ չեն պակսիր թէ՛ դաւառաց և թէ՛ Պօլսոյ մէջ, և տէրութեան կը դրկէ: Ասով մէկ կողմէն անյարմար երիտասարդք զինուորութեան երթալու հարկէն ազատ կը մնան, միւս կողմէն տէրութիւնն ալ՝ փոխանակ փափուկ և երկնաւ մարդոց, որք իւր հիւանդանոցները չենցնելու միտին կը ծառայեն, կորովի և քաջասիրտ զօրականներ կուենայ, որք կրնան ստոյգ ծառայութիւններ մատուցանել հայրենեաց:

Մեր այս գիտողութիւնն Օսմ. երեսօխոսանական ժողովոյ Մեծ. Հայ անպամոց ուշադրութեանը ներկայացնելով, կը սիրենք յուսով որ կը հաճին իրենց լուրջ խորհրդածութեանն առարկայ ընել:

Այս օրուան վագրը լրագրին մէջ կը կարդանք թէ մայրաքաղաքի հեռագրաց վերատեսչութեան կողմէ երեկ իրիկուն հետեւեալ հեռագիրն հաղորդուեր է Մեծ-Եպարքոսին.

«Պաթմուի հեռագրատան տեւտուը կը ծանուցանէ թէ Արտաշան ետ առնուեր է:

(Ստորագրութիւն) Մեհմ. Իշէֆե.

«Լիվանայի գալմագամ Ալի Նիհատ ստորագրութեամբ Լազուսանի կառավարչին քաջաւած հեռագիր:

«Մուսա փաշային իրօք Արտաշանը գրաւած ըլլալը՝ Արտաշանէն հիմա եկող ջեքքէզ Ալին իմաց տրուաւ, և ինք ալ վաղը Պաթմու գալու համար ճանաչալ պիտի ելնէ»:

Վագրը՝ այս յուրերն հրատարակելէ ետեւ կը յարէ. «Կերեկի որ այս լուրերը պաշտօնական չեն, սակայն Արտաշանի առման ցաւալի լուրն ալ նախ ճանապարհօրդներէ իմացուեցաւ և յետոյ ստոյգ ելաւ: Կը յուսանք որ այս յուրն ալ պաշտօնապէս կը հաստատուի»:

Նոյն թերթին մէջ կը կարդանք գարձեալ թէ կայսերական կառավարութիւնն երկիրն իսլամադարձութիւնն ապահովելու նպատակաւ Պետական խորհրդոյ անդամ Ալիեաճ Էֆէնտին, Արտաքին գործոց նախարարութեան Բեաթիյ Էֆէնտին, առեւտրական և երկրագործական ժողովին անդամ Բիւլէիք Էմին պէյ, թէյալ ու Գահ-քահա ծաղրաթերթի տնօրէն Մահմ. Կաթի պէյ և ուրիշ քանի մը կասկածելի անձինք, ինչպէս նաեւ Գէմալ պէյն աքսորեր է:

Ինչպէս որ ծանուցուած էր, Գահ-մալիկեան քոյրերուն սպանման առթիւ ամբաստանեալ ջեքքէզ Աճմէտ պէյի դատն երեկ օճադատ տոտենին առջև տեսնուելով, փոխանորդ Եօրտամեան Աւետիս Էֆէնտինի հարտար փաստաբանութեամբ յիշեալ Աճմէտ պէյին անմեղութիւնը հաստատուեցաւ և հետեւաբար բանտէն արձակուելու վճիռ տրուեցաւ:

Բ. Դրանէն հետեւեալ պաշտօնական գրկուցումն հաղորդուեցաւ լրագրաց.

«Բանի մը լրագիրք ծանուցին թէ Յունաց և Հայոց Պատրիարքարանները մայրաքաղաքի մէջ զինուորագրութիւն ընելու որոշման վրայ գիտողութիւն ըրեր են:

«Այս յուրն հիմնովին սուտ է»:

Կայսերական կառավարութիւնն ոչխարաց տասնորդի տուրքը մի միայն այս տարուան համար կրնան պատկեց: Այս արտաքոյ կարգի տուրքը պատերազմական ծախուց պիտի յատկանայ:

Մայրաքաղաքիս գերմանական նոր գետպան Ռեօս իշխանը շարաթօրն արքունական շքեղ կառքերով ելլողով Գէօշիլը Գնաց և իւր գետպանութեան վկայագրերը վեհ. Սուլթանին մատոյց:

Յետոյ նոյն հանգիսիւ Բ. Դրանը Գնաց և Բարձր. Մեծ-Եպարքոսին և արտաքին գործոց նախարարին հետ տեսակցեցաւ:

Քիչ մ'ետքը Մեծ-Եպարքոսն և արտաքին գործոց նախարարն ալ Բերա երթալով փոխադարձ այցելութիւն տուին գետպանին:

Երէկուան Սթամպուլ լրագիրը կը ծանուցանէ թէ կիրակի օրը Վոսփօրի Արիական եղերաց գիւղերու մէջ շատ մը տուններ կոխուելով երկու Բազար գոյրք լցնելու չափ ոյլ և ոյլ զէնք հաւաքուեր է:

Տէրութեան նախարարներն ու բարձրաստիճան պաշտօնատարներն իրենց ամսականին մէկ քառօրեք զինուորական ծախուց նուիրեցին մինչև պատերազմին վերջը:

Երէկուան վագրը մէջ կ'կարդանք թէ Լէվընթ Հէրայտ լրագիրը զինուորական իշխանութեանց և պատերազմական գործոց վրայ սուտ ու սխալ լուրեր հրատարակելուն պատճառաւ մէկ ամիս դադարէր է:

Ռուսիոյ կոմսը մը կը շնեն իպրայիլի մետ, զոր Դանուբի վրայ ձգելու գիտաւորութիւն ունին: Էւ որպէս զի Օսմանեան զրահաւորներն արգելք չկրնան ըլլալ, գետերին վրայ խոշոր թնդանութիւնը զետեղեր են:

Ռուսներն լրագրոց խօսքին նախելով, Դանուբի վրայ Օսմանեանց գրաւած նաւերուն թիւն 200ը կանցնի: Այս նաւերն 129000 էքթօլիթր ցորեն կը պարունակէին:

Թուրք լրագրի մը խօսքին նայելով, գրօտակի ներքև կոչուած Միւսթաֆը զօրաց գումարն 217,000 մարդու կը հասնի:

Անցեալ շաբթու կայսերական բանակին նուիրեալ ձիերուն թիւը 500ի կը հասնի:

Բ. Դրան իմանալով որ հարուստ բայց չահաւեր անձինք իրենց ձիերը դուրս կը զրկեն, մայրաքաղաքէս դուրս ձի տանին արգելից:

Լա թիւրքի լրագրին շարաթ աւուր թուոյն մէջ՝ Ռուսաց Ասիական բանակին սպարապետ Միլայէլ Լօրու Միլիքեանց զօրավարին համար ըսւած է թէ Վրաստանի թագաւորական տոհմէն սերեալ և հետեւաբար վրացի է:

Մեք թէ և յիշեալ զօրավարին ցեղագրութիւնը ճշգիւ չենք գիտեր, բայց սաչափն ստոյգ գիտենք թէ Սիւնեաց աշխարհի Հայոց հին ազնուական ազգատոհմերուն մէկէն սերեալ՝ Հայու որդի Հայ է, և քաջ կը յիշենք որ առկէ 18 տարի առաջ երբոր յիշեալ զօրավարն հոգեւոյս Մատթէոս կաթողիկոսն Էմիլիանին տանելու համար Կ. Պօլսոյ եկաւ, հե-

Եղեկութեանց համար պէտք է ղ/մել Մ/ւ
լաթ/իոյ Բէրլէմպէ բազարի մօտ Լլապանի
Խաչոյր գործակատար